



Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում իրականացվող «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ենթադրամաշնորհային ծրագրի շրջանակներում 2019 թվականի հունիսի 12-ին Տավուշի մարզպետարանում անցկացվեց կլոր սեղան քննարկում Տավուշի մարզպետարանի, ՀԿ ներկայացուցիչների միջև:

Հանդիպման հիմնական նպատակը «Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի շրջանակներում իրականացված ուսումնասիրությունների ներկայացումն էր, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքների և նրանց երեխաների հետ աշխատանքի նոր մեխանիզմների ստեղծման համար առաջարկությունների հավաքագրումը: Հանդիպման ընթացքում քննարկվեցին ոլորտում առկա բացերը, մասնակիցները հանդես եկան առաջարկություններով ոլորտում բարեփոխումներ իրականացնելու համար:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագրի նպատակն է նպաստել ՀՀ-ում կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և ընտանիքների սոցիալական խնդիրների վերհանման և դրանց լուծմանն ուղղված մեխանիզմների բարելավմանը, մշակելով բարելավման առաջարկություններ: Ծրագրի իրականացման աշխարհագրությունն է ՀՀ Լոռու (Ալավերդի), Տավուշի (Դիլիջան), Գեղարքունիքի (Սևան) և Կոտայքի (Հրազդան) մարզերը:

«Բազմաշահագրգիռ սոցիալական պաշտպանություն» ծրագիրն իրականացվում է  
«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ի կողմից: